



Կալիֆորնիայի հաշմանդամների պաշտպանության և շահերի
ներկայացման համակարգ
Անվճար հեռախոսահամար՝ (800) 776-5746

Տնային խնամքի ծառայություններ Պաշտպանիչ հսկողություն

Դեկտեմբեր 2019թ., Հրապ. #5493.10

Պաշտպանիչ հսկողությունը Տնային խնամքի ծառայություն է (IHSS)՝ նախատեսված այն անձանց համար, ովքեր մտային տկարության կամ հոգեկան հիվանդության պատճառով ունեն օրական 24-ժամյա հսկողության կարիք, որպեսզի այդպես պաշտպանվեն վնասվածք ստանալուց, վտանգի ենթարկվելուց կամ դժբախտ պատահարներից: IHSS ծառայության խնամակալը կարող է վճարվել՝ հաշմանդամություն ունեցող երեխային կամ մեծահասակին հետևելու և հսկելու համար, երբ տվյալ անձը տանը ապահով լինի, եթե տրամադրվում է 24-ժամյա հսկողություն MPP 30-757; MPP 30-757.173(a):

Պաշտպանիչ հսկողության ծառայությունների հատկացման գործընթացը կարող է դժվար լինել և կպահանջի ծառայության անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթղթեր: Այս հրապարակումը նախատեսված է օգնելու ձեզ հասկանալ պաշտպանիչ հսկողության ծառայությունների տրամադրմանը համապատասխանելու պայմանները և հաղթահարել պաշտպանիչ հսկողության ծառայությունների մերժումը: Այս հրապարակումը պարունակում է կից կյուլթեր, որոնք ձեզ անհրաժեշտ կլինեն պաշտպանիչ հսկողության համար դիմելու և լուսմներին պատրաստվելու համար:

- 1) Պաշտպանիչ հսկողության կարիքի գնահատում Տնային խնամքի ծառայությունների ծրագրի համար (SOC 821 (3/06)): - Այս ձևը լրացնում է IHSS շահառուի բժիշկը:
- 2) Պաշտպանիչ հսկողության բժշկի նամակի նմուշ: – IHSS շահառուի բժիշկը տրամադրում է կարիքը մանրամասնող նամակ:

Այս նամակը գրելու համար շահառուի բժշկին անհրաժեշտ կլինի նաև շահառուի Վտանգների կամ վնասվածքների գրքուկի պատճեն:

3) Օրական 24-ժամյա պաշտպանիչ հսկողության ապահովագրական ծածկույթի պլան (SOC 825 (6/06)): – Այս ձևը լրացնում եք դուք:

Ինչու՞ Է կարևոր պաշտպանիչ հսկողությունը:

IHSS ծրագիրը բաղկացած է չորս ծրագրերից, որոնք կքննարկվեն ավելի ուշ: Պաշտպանիչ հսկողությունը համապատասխանող անձինք ծառայությունն ամսական կստանան առավելագույնը 195 կամ 283 ժամաքանակով: Սակայն անհրաժեշտ ժամերի առավելագույն քանակը կախված է այն բանից, թե չորս ծրագրերից որին եք դիմել, և արդյոք շահառուն համարվում է «ծանր հիվանդ»: Ժամերի թույլատրված ընդհանուր քանակը (այսինքն այն ժամերը, որ շահառուն կարող է ստանալ) կարող է փոփոխվել նաև ըստ ստացվող այլընտրանքային ռեսուրսների: IHSS շահառուներն իրենց ծանուցման մեջ կարող են տեսնել, թե որ IHSS ծրագրին են իրենք կցվել, և ինչպես է վարչաշրջանը սահմանելու իրենց ժամերը:

IHSS-ի չորս ծրագրերը և առավելագույն ժամերը, որ անձը կարող է ստանալ, հետևյալն են.

- IHSS մնացորդային ծրագիր (անգլ.՝ HSS Residual Program, IHSS-R)
- Ոչ ծանր հիվանդությունն ունեցող անձինք Պաշտպանիչ հսկողության ծառայությունից օգտվելու դեպքում ամսական կարող են ստանալ առավելագույնը մինչև 195 ժամ: Ծանր հիվանդությունն ունեցող անձինք ստանում են ամսական 283 ժամ (Բարեկեցության և սոցիալական ապահովության մասին օրենքի § 12303.4),
- Անհատական խնամքի ծառայությունների ծրագիր (անգլ.՝ Personal Care Services Program, PCSP)
- PCSP ծրագրում ընդգրկված շահառուները համապատասխանում են ամսական առավելագույնը 283 ժամ ստանալու համար՝ անկախ նրանց հիվանդության ծանր կամ ոչ ծանր գնահատումից (Բոլոր վարչաշրջաններին

ուղղված նամակ 93-21 (16-ը մարտի, 1993թ.), հետևյալ հղումով՝

<http://www.cdss.ca.gov/lettersnotices/entres/getinfo/acl93/93-21.PDF>

- IHSS Plus տարբերակ (անգլ.՝ IHSS Plus Option, IPO)
- Ոչ ծանր հիվանդություն ունեցող անձինք Պաշտպանիչ հսկողության ծառայությունից օգտվելու դեպքում ամսական կարող են ստանալ առավելագույնը մինչև 195 ժամ: Ծանր հիվանդություն ունեցող անձինք ստանում են ամսական 283 ժամ (Բարեկեցության և սոցիալական ապահովության մասին օրենքի § 14132.952, Բոլոր վարչաշրջաններին ուղղված նամակ 11-19 (23-ը փետրվարի, 2011թ.), հետևյալ հղումով՝

<http://www.cdss.ca.gov/lettersnotices/entres/getinfo/acl/2011/11-19.pdf>

- և
- Համայնքի առաջնահերթ ընտրության իրավունքով տարբերակ (անգլ.՝ Community First Choice Option, CFCO)
- Ոչ ծանր հիվանդություն ունեցող անձինք կարող են ստանալ 195 ժամ պաշտպանիչ հսկողության ծառայություններ, գումարած այլ ծառայությունների ժամերը՝ առավելագույնը ամսական մինչև 283 ժամ (Բոլոր վարչաշրջաններին ուղղված նամակ 14-60 (29-ը օգոստոսի, 2014թ.), հետևյալ հղումով՝

<http://www.cdss.ca.gov/lettersnotices/EntRes/getinfo/acl/2014/14-60.pdf>

Ի՞նչպես են որակվում որպես ծանր հիվանդ:

Որպես «ծանր հիվանդ» որակվելու համար հիվանդը պետք է ունենա ոչ բժշկական անհատական ծառայությունների, կերակուրի պատրաստման, կերակուր պատրաստելու և կերակրելու անհրաժեշտության դեպքում մաքրության ծառայությունների և

բժշկական ծառայությունների շաբաթական քսան կամ ավելի ժամ (MPP 30-701(s)(1)):

Ե՞րբ է առաջարկվում IHSS պաշտպանիչ հսկողությունը:

Պաշտպանիչ հսկողության ծառայություններին համապատասխանող անձինք պետք է ունենան՝

- 1) «մտային տկարություն» կամ «մտավոր հիվանդություն», որոնք առաջացնում են հետևյալ ֆունկցիոնալ սահմանափակումները՝
 - հիշողությունը (օրինակ առարկաները, մարդկանց, վայրերը, որևէ բան սկսելը կամ ավարտելը մոռանալը, և այլն)
 - կողմնորոշվելու ունակությունը (օրինակ ժամանակը, մարդկանց, վայրերը, միջավայրը, շրջապատը և այլն զգալու և դրանց հարմարվելու անկարողությունը, ինչն անհրաժեշտ է ապրելու և գործեր կատարելու համար)
 - կշռադատելու ունակությունը (օր.այնպիսի որոշումներ կայացնելը, որոնք վտանգի են ենթարկում անձի առողջությունը և/կամ անվտանգությունը)

և

- 2) Տկարությունները շահառուի մոտ պետք է առաջացնեն գիտակցության շփոթություն և ինքնատիրապետման անկարողություն, օրինակ սեփական անձի անվտանգությունն ապահովելու և վնասվածքներից ինքն իրեն պաշտպանելու անկարողություն, MPP 30-757.171: Օրինակ՝ IHSS շահառուն, ով չի հասկանում, թե ինքը ինչը կարող է կամ չի կարող անել, առանց պաշտպանիչ հսկողության ենթակա կլինի վնասվածքներ ստանալու վտանգին, երբ փորձի իր կարողություններից դուրս արարքներ անել: Նման ծանր տկարությունները կարող են ի հայտ գալ մտավոր թերզարգացության, աուտիզմի, Ալցհայմերի հիվանդության, թուլամտության և հոգեբուժական հիվանդությունների հետ: **Սակայն այս հաշմանդամություններից ընդամենը մեկն ունենալը ավտոմատ կերպով չի որակում որպես IHSS շահառու պաշտպանիչ հսկողության ծառայություններից օգտվելու համար:**

և

3) Վարչաշրջանը պետք է նաև սահմանի, որ շահառուն ունի օրական քանչորսժամյա հսկողության կարիք, որպեսզի կարողանա ապահով մնա տանը, MPP 30-757.173: Սա չի նշանակում, որ ծառայությունն մատուցողը պետք է ամբողջ ժամանակ ներկա լինի և հետևի անձին: Դա կարող է լինել անձին որևէ այլ կերպ հետևելը, օրինակ երբ անձը որոշակի կարճ ժամանակով մենակ է մնացել, MPP 30-172.(b)(3) and ACL 98-87:

Վարչաշրջանի աշխատակազմից պահանջվում է նաև բացատրել պաշտպանիչ հսկողության ծառայությունների մատչելիությունը և անհրաժեշտությունը և արդյոք տանից դուրս իրականացվող խնամքը կարող է համարվել համապատասխան այլընտրանքային պաշտպանիչ հսկողություն, MPP 30-757.174:

Ո՞ր դեպքերում չի տրամադրվում պաշտպանիչ հսկողություն:

Պաշտպանիչ հսկողության ծառայությունների տրամադրումը կմերժվի, եթե պաշտպանիչ հսկողության ծառայությունների կարիքը հետևյալի համար է՝

- Սիրալիրության այց կամ սոցիալական ակտիվություն
- Երբ կարիքը պայմանավորված է որևէ հիվանդությամբ, և անձն ունի բժշկի հսկողության կարիք (օրինակ շահառուին հետևելը և շրջելը պառկելախոցի առաջացումը կանխելու համար)
- Շտապ օգնությանը սպասելիս (օրինակ մարմնի ծանր վնասվածքներ կամ մարմնի որևէ մասի կամ օրգանի ծանր աստիճանի դիսֆունկցիա: Այդպիսի դեպքեր են կաթվածը, Էպիլեպսիկ կամ սրտի կամ ասթմատիկ նոպաները)
- Շահառուի հակասոցիալական կամ ագրեսիվ վարքագիծը (օրինակ կռվի բռնվելը կամ գույքը փչացնելը) վերահսկելու համար
- Դիտավորյալ (այսինքն ազդեցության և հետևանքների ուշադիր վերլուծությունից հետո) ինքնավստող պահվածքը, օրինակ ինքնասպանությունը կամ երբ անձը միտումնավոր նպատակ ունի վնասել ինքն իրեն (MPP 30-757.172):

Պաշտպանիչ հսկողությունը տրամադրվում է երեխաներին:

Այո: Երեխան կարող է ստանալ պաշտպանիչ հսկողության ծառայություններ: Սակայն միևնույն տարիքի այլ երեխաների հետ համեմատած՝ երեխան պետք է ունենա ավելի մեծ հսկողության կարիք:

Վարչաշրջանի աշխատակիցները պետք է անհատականորեն ստուգեն բոլոր երեխաների մտային ունակությունները և պաշտպանիչ հսկողությունը տրամադրեն ըստ անհատական կարիքի: Մտային տկարություն ունեցող բոլոր երեխաները պետք է անցնեն ստուգում պաշտպանիչ հսկողության համար:

Երեխաներին չեն կարող մերժել պաշտպանիչ հսկողության ծառայությունների տրամադրումը հետևյալ հիմքերով՝

- միայն տարիքի պատճառով,
- քանի որ երեխան վերջերս վնասվածք չի ստացել,
- քանի որ ծնողը երեխային որոշակի ժամանակով, օրինակ հինգ րոպեով, մենակ է թողել:

Պաշտպանիչ հսկողության կարիքը սահմանելիս՝ վարչաշրջանը պետք է հաշվի առնի բոլոր փաստերը, այդ թվում՝ այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են տարիքը, վնասվածքների բացակայությունը, ծնողների բացակայությունը:

Վարչաշրջանը պաշտպանիչ հսկողության տրամադրման և համապատասխանության մասին պետք է խոսի նաև երեխայի ծնողի կամ խնամակալի հետ և չենթադրի, որ ծնողները կամ խնամակալը կարող են անվճար տրամադրել ծառայությունները (ACL 98-87):

Մտային տկարության կամ հիվանդության հետևանքով դրսևորվող վարքագծի փաստաթղթավորում՝ ցույց տալու պաշտպանիչ հսկողության համապատասխանությունը

Պաշտպանիչ հսկողության համապատասխանությունը ցույց տալու նպատակով դուք պետք է ներկայացնեք փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ մտային տկարության կամ մտավոր հիվանդության հետևանքով IHSS շահառուն վնասվածք ստանալու վտանգի տակ է, եթե օրվա 24 ժամվա մեջ որևէ պահի մնա առանց հսկողության: Փաստաթղթերը պետք է ներկայացնեն օրինակներ, որ շահառուն կարող

Է անել այնպիսի բաներ, որոնք կվնասեն իրեն կամ վտանգի կենթարկեն իրեն, եթե մնա մենակ:

Եթե չեք կարող շահառուի մոտ սահմանել որևէ վտանգավոր վարքագիծ կամ այնպիսի բաներ, որոնք շահառուն կարող է անել և վնասել իրեն, կամ շահառուին մենակ թողնելիս կստեղծվի անապահով վիճակ, հավանական է, որ պաշտպանիչ հսկողության ձեր դիմումը կմերժվի:

Դուք պետք է համոզվեք, որ պահել եք պաշտպանիչ հսկողության ծառայություններից օգտվելու համապատասխանությունը ցույց տալու համար ձեր հավաքած բոլոր փաստաթղթերի պատճենները:

1) Վտանգների և վնասվածքների գործուկի կազմում

Համապատասխանությունը (այսինքն պաշտպանիչ հսկողության կարիքը) ցույց տալու լավագույն միջոցը անցած վեց (6) ամիսների ընթացքում, կամ ըստ անհրաժեշտության ավելի երկար ժամանակահատվածում, շահառուի ունեցած յուրաքանչյուր պատահարի/ստացած վնասվածքների ցանկը կազմելն է:

Ձեր կազմած ցանկում պետք է նկարագրեք շահառուի կատարած յուրաքանչյուր գործողություն, որը կարող էր վնասվածք պատճառել կամ շահառուին ենթարկել Է վնասվածք ստանալու կամ վնաս պատճառելու վտանգի՝ նշելով նաև դրանց հաճախականությունը:

Այսպիսի վարքագծի մի քանի օրինակներ են. տանը վառած ծխախոտ թողնելը, ինքնուրույն լողանք ընդունելու կամ լվացվելու ժամանակ SOS կոճակի սեղմումը, տանից դուրս գբոսնելը և մոլորվելը, օտարներին տուն թողնելը, սալօջախը միացնելը և մոռանալ անջատելը, տան շուրջը փոքր խարույկներ վառելը, ջրի ծորակը բաց թողնելը, վտանգավոր ապրանքներ կամ անառողջ սնունդ ուտելը, գլխով հարվածելը, ինքն իրեն կծելը և ճանկռելը, դանակներ կամ այլ վտանգավոր կենցաղային պարագաներ օգտագործելը, թռչելու փորձ կատարելու համար որևէ բարձր տեղ մագլցելը և ներքև ցատկելը, սառնարանում թաքնվելը, հոսանքի առկայությունն ստուգելու համար մատները լամպի կոթառի մեջ մտցնելը, առանց երթևեկությանը հետևելու փողոցով քայլելը, առանց լողալ իմանալու լողավազանի մեջ ցատկելը, կահույք տեղաշարժելու ցանկությունը, երբ անձը չունի անհրաժեշտ հավասարակշռությունն ու ուժը, մահճակալից վեր կենալու փորձ անելը այն դեպքում, երբ տվյալ անձը չունի մկաններն օգտագործելու կամ կառավարելու կարողություն, անձի մտավոր կամ ֆիզիկական

կարողություններից վեր որևէ գործ անելը, ինչը վնաս կամ վնասվածք կպատճառի շահառուին:

Եթե շահառուն վերջին շրջանում չի ունեցել որևէ պատահար կամ իրեն վտանգի չի ենթարկել, բացառությամբ ինչու: Օրինակ անձը եղել է IHSS խնամակալի և ընտանիքի անդամների 24-ժամյա հսկողության տակ՝ պատահարները կանխելու համար: Ներկայացրեք այն գործողությունները, որոնք խնամակալը և ընտանիքի անդամները ձեռնարկել են վնասվածքների կամ պատահարների առաջացումը կանխելու համար:

Վտանգների ու վնասվածքների գրքույկում դուք հավանաբար կցանկանաք ունենալ նշումների բաժին, որտեղ կխոսեք այն մասին, թե ինչու հնարավոր չէ փոփոխել շահառուի տունը կամ այն դարձնել լիարժեք ապահով, և/կամ նշել անձի հսկողության այլընտրանքային ձևը մասին այն դեպքերում, երբ IHSS շահառուն պետք է տանը մենակ մնա որոշակի կարճ ժամանակահատվածով (եթե կիրառելի է): Օրինակ շահառուն կարող է ամսական երկու անգամ մենակ մնալ առավելագույնը 2 ժամով, որպեսզի ընտանիքի անդամը գնա գնումներ կատարելու, իսկ այդ ընթացքում շահառուի հսկողությունը կատարվում է յուրաքանչյուր 20 րոպեն մեկ տուն զանգահարելու միջոցով:

2) Ձեռք բերեք լրացուցիչ նամակներ պաշտպանիչ հսկողության կարիքի փաստաթղթային հիմնավորում ունենալու համար

Տարածաշրջանային կենտրոնից վերցրեք նամակ կամ ձեռք բերեք որևէ այլ ռեսուրս, օրինակ ցերեկային ծրագրի կամ դպրոցական ծրագրի մասնակցություն: Նամակը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

Տարածաշրջանային կենտրոնից վերցրեք նամակ կամ ձեռք բերեք որևէ այլ ռեսուրս, օրինակ ցերեկային ծրագրի կամ դպրոցական ծրագրի մասնակցություն: Նամակը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

- Շահառուի տարիքը,
- Տեղեկատվություն շահառուի մտային տկարություն(ներ)ի և/կամ մտավոր հիվանդությունների մասին,
- Տեղեկատվություն տկարություն(ներ)ի հետևանքով հիշողության, կողմնորոշման և կշռադատելու կարողության սահմանափակումների ծանրության աստիճանի մասին,

- Նկարագրություն, թե հիշողության, կողմնորոշման և կշռադատելու սահմանափակ կարողությունը ինչպիսի մտային շփոթություն և ինքնադեկավարման անկարողություն է առաջացնում (օրինակ տեղանքները, ժամանակը, մարդկանց ճանաչելու անկարողությունը),
- Տեղեկատվություն՝ արդյոք անձի անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է հսկել և հետևել նրան, թե ոչ և ինչու (օրինակ երբ շահառուն անում է այնպիսի բաներ, որոնք անվտանգ չեն, անձն ունի բանավոր խոսքի խնդիրներ, իսկ վարքագիծը դադարեցված է),
- Բերեք անձի վտանգավոր վարքագծից օրինակներ և նշեք, թե ինչ հաճախականությամբ են դրանք պատահում:

Պաշտպանիչ հսկողության կարիքը հիմնավորող բժշկական փաստաթղթերի ստացում

1) Ձեռք բերեք շահառուի բժշկի կողմից լրացված «Պաշտպանիչ հսկողության կարիքի գնահատում Տնային ինամբի ծառայությունների ծրագրի համար» (SOC 821 (3/06)) ձևաթուղթը

Պաշտպանիչ հսկողության ծառայությունների համար դիմելիս՝ դուք պետք է ձեռք բերեք շահառուի բժշկի կողմից լրացված ներկայիս SOC 821 ձևաթուղթը: Ձևաթղթի մեկ օրինակը պահեք ձեզ մոտ: Վարչաշրջանն այս ձևաթուղթն օգտագործում է տեղեկատվություն հավաքելու և պաշտպանիչ հսկողության կարիքը սահմանելու համար: SOC 821 ձևաթուղթը կարելի է ներբեռնել այստեղ՝

Ձևաթուղթը կարող է ստորագրվել միայն որևէ մասնագետ բուժաշխատողի կողմից, ով ունի հիշողության, կողմնորոշման կամ կշռադատելու ֆունկցիաների ոլորտում մասնագիտացում կամ փորձառություն, MPP 30-757.173(a)(1)(A):

<http://www.cdss.ca.gov/cdssweb/entres/forms/English/SOC821.PDF>

SOC 821 ձևաթղթում շահառուի բժիշկը տրամադրում է տեղեկատվություն շահառուի հիշողության, կողմնորոշման կամ կշռադատելու կարողությունների մասին: Ձևաթղթում պետք է ներկայացնել նաև տեղեկատվություն բոլոր այն վնասվածքների ու պատահարների մասին, որոնք շահառուն ունեցել է հիշողության, կողմնորոշման կամ կշռադատելու կարողությունների պակասի հետևանքով, և արդյոք անձը կարող է ինքն իրեն ֆիզիկապես վտանգավոր իրավիճակների մեջ դնել, թե ոչ:

Շատ դեպքերում վարչաշրջանը պաշտպանիչ հսկողությունը տրամադրում է, եթե շահառուի բժիշկը նշում է կատարում SOC 821 ձևաթղթի հարցերի մեկ կամ երկու «այո» վանդակներում և նշում է կարողությունների սահմանափակման «ծանր» պատասխանով բոլոր վանդակները, վարչաշրջանը կարող է նաև մերժել պաշտպանիչ հսկողության տրամադրումը յուրաքանչյուրին: Ինչևէ, վարչաշրջանը պաշտպանիչ հսկողության կարիքը գնահատելու համար հակված է օգտագործել SOC 821 ձևաթուղթը այլ համապատասխան տեղեկատվության հետ միասին: Պաշտպանիչ հսկողության համար համապատասխանությունը ցույց տալու համար չպետք է օգտագործվի միայն ձևաթուղթը (SOC 821) (Բարեկեցության և սոցիալական ապահովության մասին օրենքի § 12301.21 և MPP 30-757.173(a)(2) և (3)):

Նշում. Եթե շահառուի բժիշկը նախկինում լրացրել է SOC 821 (3/06) ձևաթուղթը և նրանում նշել է, որ շահառուն չունի պաշտպանիչ հսկողության կարիք, իսկ վերջին լրացրած SOC 821 ձևաթղթում նշել է պաշտպանիչ հսկողության կարիքի մասին, ապա բժիշկը պետք է բացատրի, թե ինչու է փոխվել կարիքը: Օրինակ, եթե շահառուի ֆունկցիոնալ սահմանափակումներն ավելի են շատացել կամ եթե բժիշկը նախորդ անգամ սխալ է լրացրել վանդակում կամ չի իմացել ինչպես լրացնել ձևաթուղթը, ապա բժիշկը պետք է բացատրի դա վերջին լրացրած SOC 821 ձևաթղթում:

2) Բժշկից վերցրեք պաշտպանիչ հսկողության կարիքը հիմնավորող լրացուցիչ նամակ (Յավելված 1)

Բժշկից վերցրեք նամակ, որը հիմնավորում է շահառուի հաշմանդամությունը (հոգեկան հիվանդությունը կամ մտային տկարությունը), ցույց է տալիս ֆունկցիոնալ կարողությունների մակարդակը, տարիքը և նկարագրում է, թե ինչպես է մտային շփոթություն առաջացնում հաշմանդամությունը կամ ինչ բացասական ազդեցություն է գործում կշռադատելու, կողմնորոշման կարողության կամ հիշողության վրա: Դուք կարող եք օգտագործել նաև այս հրապարակման վերջում կցված ձևաթուղթը՝ շահառուի բժշկից վերոնշյալ տեղեկատվությունն ստանալու համար:

Որպեսզի բժիշկը կարողանա ճիշտ լրացնել այս փաթեթի ձևաթուղթը կամ տալ նամակ այն անհրաժեշտ տեղեկատվությամբ, թե ինչով են շահառուի հիվանդությունները խոչընդոտում նրան տանը մենակ մնալ,

Նա պետք է որոշակի չափով տեղյակ լինի անձի վարքագծի և ֆիզիկական ու մտավոր այն ունակությունների մասին, որոնցով նա իր համար ստեղծում է վտանգավոր իրավիճակներ: Դուք կարող եք շահառուի բժշկին տրամադրել ձեր կազմած վտանգների ու վնասվածքների ցանկի պատճեն, որպեսզի նրան տեղեկացնեք շահառուի այն վտանգավոր վարքագծի մասին, որը թույլ չի տալիս նրան օրվա 24 ժամվա մեջ ցանկացած պահի տանը մենակ մնալ:

Պաշտպանիչ հսկողություն ստանալու այլ ձևեր

1) Ձեր կողմից լրացված «ՕՐԱԿԱՆ 24-ԺԱՄՅԱ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՊԼԱՆԻ» (SOC 825 (6/06)) ձևաթուղթ

Եթե դուք դիմում եք 24-ժամյա պաշտպանիչ հսկողություն ստանալու համար, դուք պետք է լրացնեք նաև SOC 825 ձևաթուղթը: Այս ձևաթղթում դուք պետք է ներկայացնեք տեղեկատվություն, թե ինչպես է տրամադրվելու 24-ժամյա պաշտպանիչ հսկողությունը, MPP 30-757.173(a)(1)(A)(5): Չնայած ձևաթղթում ասվում է, սակայն մենք խորհուրդ ենք տալիս լրացնել «Վարչաշրջանի ընդհանուր օգտագործման ձևաթուղթ»-ը:

Այն տրամադրում է ձեր վարչաշրջանի սոցիալական ապահովության գրասենյակը: Ձևաթուղթը կարելի է գտնել նաև <http://www.cdss.ca.gov/cdssweb/entres/forms/English/soc825.pdf>

Վարչաշրջանն ասում է, որ պաշտպանիչ հսկողության կարիք չունեմ: Ի՞նչ պետք է ես անեմ:

Վարչաշրջաններն ունեն շատ ընդհանուր պատճառներ որևէ մեկին ասելու, որ նա չի համապատասխանում պաշտպանիչ հսկողության ծառայություններին: Ստորև բերված է վարչաշրջանների ընդհանուր հիմնավորումների ցանկը և դրանց տրվող մի քանի հնարավոր արձագանքներ:

Արդյո՞ք առկա է ծանր աստիճանի մտային տկարություն:

Վարչաշրջանի հիմնավորում	Արձագանքում
<p>Տնային այցի ժամանակ լուրջ մտային տկարություն չի դիտվել:</p>	<p>Ձեր ամենօրյա գրանցումները, բժշկի տեղեկանք, տարածքային կենտրոնի գրառումները, տնային այցը շատ կարճատև էր, դիտվել է վարքագիծը և չի պատասխանել ուղեցույցի հարցերին, մտավոր թերզարգացություն ունեցող հիվանդները այցելուներին ցույց են տալիս միայն «լավ օրերը», SOC 293 ձևաթղթի H տողում նշված է 5 մեկ մտային տկարության համար:</p>
<p>Ունի պաշտպանիչ հսկողության կարիք ֆիզիկական հիվանդության, այլ ոչ մտային տկարության պատճառով:</p>	<p>Մտային տկարության հետևանքով չի հասկանում ո՛չ ֆիզիկական հիվանդությունները, ո՛չ էլ կարողանում է հասկանալ կամ գնահատել գործողությունների հետևանքները ֆիզիկական խնդիրների համար, այսինքն փորձում է վեր կենալ կամ քայլել առանց օգնության այն դեպքում, երբ շաքարախտի պատճառով չի կարող դա անել ինքնուրույն, փորձում է հանել վիրակապերը, խողովակները կամ օրթոդոնտիկ կապիչները, քանի որ դրանք վերք կամ գրգռվածություն են առաջացնում, և այլն:</p>
<p>Ֆիզիկական հիվանդություններն առաջացնում են վտանգավոր վարքագիծ:</p>	<p>Մտային տկարությունները նույնպես առաջացնում են ոչ անվտանգ վարքագիծ, կարիք չկա ցույց տալ, որ մտային խնդիրը միակ պատճառն է:</p>

Տանը ցուցաբերում է վտանգավոր վարքագիծ:

Վարչաշրջանի հիմնավորում	Արձագանքում
Մտավոր խնդրի պաշտոնական աշխատորոշմամբ կարիքը չի հիմնավորվում:	Այդպիսի աշխատորոշում ունեցող անձի համար բժշկի տրամադրած տիպիկ վարքագծի մասին տեղեկանքը:
Ոչ մի վնասվածք վերջին շրջանում:	Շահառուն ունեցել է լավ հսկողություն:
Վարչաշրջանի աշխատակցի տնային այցի ժամանակ որևէ վտանգավոր վարքագծի ապացույց չի նկատվել:	Հաճախականությունը ժամային չէ, բաց են թողնվել նախորդ և հաջորդ օրերը, հնարավոր չէ ընդհանրացնել օրվա մեջ մեկ ժամից մինչև 24 ժամի ընթացքում:
«Ամբողջական» ֆիզիկական կաթվածը թույլ չի տալիս շահառուին որևէ բան անել:	Որևէ դիտավորյալ գործողություն, որը վտանգավոր է, օր. կաթետրի, գաստրոստոմային խողովակի հանումը և այլն:

IHSS և պաշտպանիչ հսկողության այլ ռեսուրսներ

Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքների պաշտպանության կազմակերպությունն իր կայքէջում ունի IHSS-ի վերաբերյալ հրապարակումներ, որոնք գետեղված են այստեղ՝ <https://www.disabilityrightsca.org/publications/in-home-supportive-services-ihss>

Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքների պաշտպանության կազմակերպությունը Կալիֆորնիայի հաշմանդամություն ունեցող բնակիչներին տրամադրում է նաև հաշմանդամության խնդիրների հետ կապված անվճար ծառայություններ: Օգնություն ստանալու համար կարող եք կապվել Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքների պաշտպանության կազմակերպության հետ՝ զանգահարելով 1-800-776-5746 հեռախոսահամարով և պահանջել ընդունելություն:

Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության դեպարտամենտն իր կայքէջում հրապարակում է իր կանոնակարգերը, որոնք ընդգրկված են «Քաղաքականությունների և ընթացակարգերի ձեռնարկ»-ում (անգլ. Manual of Policies and Procedures, MPP), որը կարելի է գտնել հետևյալ հղումով՝ <http://www.cdss.ca.gov/inforesources/Letters-Regulations/Legislation-and-Regulations/Adult-Services-Regulations>.

Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության դեպարտամենտն իր կայքէջում հրապարակում է Բոլոր վարչաշրջանների նամակները (անգլ.՝ All County Letters, ACLs) և Տեղեկատվական ծանուցումներ բոլոր վարչաշրջանների համար (անգլ.՝ All County Information Notices, ACIN), որոնք կարելի է գտնել հետևյալ հղումով՝ <http://www.cdss.ca.gov/inforesources/Letters-Regulations/Letters-and-Notices/All-County-Letters>

Հավելված 1

Պաշտպանիչ հսկողության նկարագրություն

Պաշտպանիչ հսկողության ծառայություններին համապատասխանելու համար անձը պետք է ունենա մտավոր հիվանդություն կամ մտային տկարություն, որի հետևանքով կոդուրի այնպիսի վարքագիծ, ինչպիսիք են՝ թույլ կշռադատելու ունակությունը (առողջության կամ անվտանգության վերաբերյալ վատ որոշումներ ընդունելը), մտային շփոթությունը/չկողմնորոշվելը (զբոսնելը և մոլորվելը, մարդկանց չճանաչելը, օրերը կամ ժամանակը չզգալը) կամ վատ հիշողությունը (մոռանալ որևէ բան սկսել կամ ավարտել): Նման տկարությունները կարող են ի հայտ գալ մտավոր թերզարգացության, աուտիզմի, Ալցհայմերի հիվանդության, թուլամտության և հոգեբուժական հիվանդությունների հետ: Պաշտպանիչ հսկողությունը նշանակում է հետևել որևէ մեկին՝ նրա անվտանգությունն ապահովելու համար:

Պաշտպանիչ հսկողությունը չի տրամադրվում հետևյալ դեպքերի համար՝

- Սիրալիրության այց կամ սոցիալական ակտիվություն
- Երբ կարիքը պայմանավորված է որևէ բժշկական ինտրոդ, և տվյալ անձն ունի բժշկի հսկողության կարիք
- Շտապ օգնությանը սպասելու ժամանակ
- Վերահսկում և հակասոցիալական կամ ագրեսիվ վարքագիծ:

Բժշկի նամակի պարունակության նմուշ

Որպեսզի ցույց տաք, որ IHSS շահառուն համապատասխանում է պաշտպանիչ հսկողության համար, IHSS շահառուն պետք է իր բժշկից ստանա ծառայությունից օգտվելու իր կարիքը հաստատող նամակ (բժշկի նամակի ձևով): Բժշկի նամակը պետք է նկարագրի անձի հաշմանդամությունը (մտավոր հիվանդությունը կամ մտային տկարությունը), ֆունկցիոնալ կարողությունների մակարդակը, ֆունկցիոնալ ինդիկատորները, նրա տարիքը և նաև նկարագրի, թե ինչպես է նրա հաշմանդամությունը նպաստում թույլ կշռադատելուն, վատ կողմնորոշվելուն, առաջացնում մտային շփոթություն կամ վատ հիշողություն: Նամակը պետք է ներկայացնի նաև անձի վտանգավոր վարքագծի օրինակներ, որոնք նա չի գիտակցում, որ վտանգավոր են:

Նամակը պետք է պատասխանի նաև հաջորդ էջում ներկայացված հարցերին, անձի պաշտպանիչ հսկողության կարիքի մասին նամակ գրելուց բացի անհրաժեշտ է լրացնել հաջորդ էջում բերված ձևաթուղթը:

Շահառուի անուն՝

Ծննդյան ամսաթիվ՝

Ախտորոշում՝

Կանխատեսում՝

1. Արդյո՞ք անձն իր հաշմանդամության հետևանքով ունի՞ մտային տկարություն կամ կոգնիտիվ խանգարումներ:

Նշել համապատասխան վանդակում՝ Այո կամ Ոչ

2. Արդյո՞ք մտային տկարությունը կամ կոգնիտիվ խանգարումները խոչընդոտում են անձի մենակ մնալուն:

Նշել համապատասխան վանդակում՝ Այո կամ Ոչ

3. Արդյո՞ք անձի Վտանգների ու վնասների գրքույկում նկարագրված վարքագիծը համահունչ է անձի ախտորոշման հետ:

Նշել համապատասխան վանդակում՝ Այո կամ Ոչ

4. Արդյո՞ք անձի հաշմանդամությունը կարող է առաջ բերել այնպիսի վարքագիծ, որոնք նշված են Վտանգների ու վնասների գրքույկում:

Նշել համապատասխան վանդակում՝ Այո կամ Ոչ

5. Արդյո՞ք հաշմանդամությունը կարող է բացասաբար ազդել անձի կշռադատելու ունակության վրա, այնպես, որ նա չգիտակցի անվտանգությունը:

Նշել համապատասխան վանդակում՝ Այո կամ Ոչ

6. Խնդրում ենք համառոտ մեկնաբանել վերոնշյալ պատասխանը և նկարագրել շահառուի ֆունկցիոնալ սահմանափակումները՝

Ես տրամադրել եմ վերոնշյալ տեղեկատվությունն իմ իմացածի ողջ
չափով:

Ստորագրել է՝

Ամսաթիվ՝

Մենք ցանկանում եք լսել Ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Ներբեռնել հարցաթերթիկը\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Northern CA), 213-213-8000 (Southern CA) հեռախոսահամարներով:

Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ.

[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html):